

դարանին արուեստին բաւական նմանութիւն ունի: Ըստ իս աւելի հաւանական է որ թիւ 1-ը ծաղկողը օգտուած՝ ըլլայ թիւ 110 ձեռագրէն մանաւանդ որ երկու ձեռագրաց տէրերն ալ եղած են նոյն ընտանեաց անդամները: Բնական է որ խնդրին վերջնական պարզումը կը կարօտի համեմատական լուրջ քննութեան, որ առ այժմ անկարելի է:

1346-էն է Թորոս Տարօնեցիէ մեր վերջին ծանօթ գործը: Էջմիածնայ թիւ 2239-2187 ժողովածուն ունի յիշատակարաններ էջ 163բ., 230, եւ 244ա. ուր կը կարդանք: «Զստացող սրասացուածոցս զՄարտիրոս քհ. Սանահնեցի եւ զծրօղ Թորոս Տարօնեցի աղայեմ զձեզ յիշեցէք զմեզ մաքուր աղօթիւք ի թուիս հայ. ԶՂԵ (1346)»:

Ստիպուած ենք այսքանով ալ փակել Թորոս Տարօնեցիի կենսագրութիւնը: Իբր վերջարան կենսագրութեան այս մասին յառաջ կը բերեմ Հ. Ն. Ակիւնեանի վերոյիշեալ գրախօսականէն հետեւեալ հատուածը: «Ինձ կը թուի թէ (Հալէպի թիւ 110 տաղարանի Թորոսը) նոյն է համանուն Տարօնեցի նկարիչ-գրչին հետ. որ 1290ին ի Դրազարկ էր, 1311ին, 1317ին, 1321ին եւ 1346-ին Գլաճոր: Ըստ այսմ Մանրուամունքիս (Հալէպի թիւ 110) գրչութիւնը կ'իյնայ 1290-1346 տարիներու մէջ. գրուած է կամ ի Դրազարկ եւ կամ ի Գլաճոր. ուստի ոչ անկասկած չալէպ»: (էջ 441: 1311-ին կը յիշուի Թորոս Սարկաւազ որ մենք դեռ չկրցանք Տարօնեցիի հետ նոյնացնել):

Կերեւայ որ Հ. Ակիւնեանի անծանօթ մնացած է 1284-էն Թորոսի գրչութիւնը ինչպէս որ մեր այս աշխատութեան ըսկիղքն իսկ տեսանք, որով Թորոս Տարօնեցւոյ տուած իր ժամանակամիջոցը պէտք է սկսի դոնէ 1284-ով եւ ոչ թէ 1290-ով:

Դժբախտաբար ինձի անծանօթ կը մնայ 1290-էն յիշատակութիւն Թորոս Տարօնեցիի Դրազարկ գտնուելուն մասին: Դուցէ Հ. Ակիւնեան ծանօթ է սակայն կրնայ ըլլալ որ իր Թորոսը ի Դրազարկ ըլլայ նոյն ան Թորոսը որ 1299-ին դեռ գրչու-